04/07/2024

Լեզվի ինստիտուտի երիտասարդ գիտնականներ Է. Ալթունյանը, Օ. Ավագյանը և Ն. Խաչիբաբյանը մասնակցեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երիտասարդ գիտնականների ընդլայնված նիստին: Նիստի խորագիրն էր «Երիտասարդ գիտնականների արդի խնդիրները, մարտահրավերները և գիտության զարգացման հեռանկարները ՀՀ-ում»:

Ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհրդի անդամ Ն. Խաչիբաբյանը հանդես եկավ գիտաչափական խնդիրների կարգավորման վերաբերյալ առաջարկով, որը ներառվեց նիստի ընդարձակ արձանագրության մեջ: Երիտասարդ գիտնականների միավորման նիստը վարում էր ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների միավորման նախագահ Ս. Հովհաննիսյանը:

07/07/2024

ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստի օրակարգում դրված էր բաժնի վարիչի պաշտոնի թեկնածուի առաջադրման հարցը: Նիստը ղեկավարում էր ավագ գիտաշխատող Ա. Վարդանյանը: Բաժնի բոլոր աշխատակիցները համակարծիք էին, որ վերջին տարիներին գիտական լուրջ հաջողություններ գրանցած բաժնի աշխատանքների մեջ մեծ է ներկայիս վարիչ բ.գ.դ. Վ. Կատվալյանի դերը: Ուստի և նա կրկին առաջադրվեց այդ պաշտոնում: Շնորհակալություն հայտնելով վստահության համար՝ պրն Կատվալյանն իր պատասխան խոսքում կարևորեց հայ բարբառների հետազոտական աշխատանքները նորովի կազմակերպելու անհրաժեշտությունը և ընդհանուր գծերով ներկայացրեց առաջիկա տարիներին կատարելիք հետազոտությունների տեսլականը:

«GENERIS PUBLISHING» հրատարակչությունը 2024 թ. հրատարակել է Ս. Գրիգորյանի «Grigor Tatevatsi. medical, grammatical and legal questions. Sayings» աշխատությունը՝ անգլերեն լեզվով:

Գրքում ներկայացվել են 14-15-րդ դարերում ապրած Տաթևացու բժշկագիտական, իրավաբանական և քերականական մի քանի հարցեր,

ինչպես նաև Տաթևացու բազմաթիվ ասույթներից մոտ երկու տասնյակը, որոնք հատկապես համամարդկային հնչեղություն ունեն:

30/09/2024

Համագործակցության առաջարկով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ էր այցելել Բելառուսի ազգային ակադեմիայի Յակուբ Կոլասի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն Իգոր Լեոնովիչ Կոպիլովը: Քննարկվեցին բարբառագիտության արդի խնդիրները Հայաստանում և Բելառուսում, դիտարկվեցին 2 ինստիտուտներում նոր զարգացող ուղղությունների՝ նյարդալեզվաբանության և հոգելեզվաբանության հեռանկարները, ինչպես նաև փոխադարձ մասնագիտական վերապատրաստումների հնարավորությունները:

04/10/2024

Ս. թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում տեղի ունեցավ հերթական կլոր սեղան-քննարկումը: Այն ընթանում էր լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության և կիրառական լեզվաբանության բաժինների միջև:

Քննարկվեցին երկու մասնագիտական ուղղությունների համար ընդհանուր հիմնախնդիրները: Ուշադրության կենտրոնում լեզվաբանության դասական և նորագույն ուղղությունները զարգացնելու հեռանկարներն էին, դիտարկվեցին վերոնշյալ մասնագիտացումներով նոր ուժեր ընդգրկելու խնդիրները, օտար լեզուների իմացության մակարդակի, մասնագիտական նորագույն գրականության յուրացման, ինչպես նաև միջազգային բարձր վարկանիշային գիտական պարբերականներում հրատարակումների նրբությունները: Կլոր սեղան-քննարկման մասնակիցները անդրադարձան նաև օտարաբանությունների խնդրին, մասնագիտական եզրույթների թարգմանելիության հարցերին:

12/10/2024

Ս. թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովը՝ նվիրված անվանի լեզվաբան, բառարանագետ Հ Ամալյանի ծննդյան 100-ամյակին:

Գիտաժողովը ողջույնի խոսքով բացեց ինստիտուտի տնօրեն Վ. Լ. Կատվալյանը՝ շեշտելով, որ հայագի-

տության երախտավորների հոբել-յանները նշելը լեզվաբանների նոր սերնդի համար ունի առանձնահատուկ նշանակություն ունի:

Ներկաները մեծ հետաքրքրությամբ լսեցին Լ. Հովհաննիսյանի զեկուցումը՝ նվիրված հին հայերենի մի շարք բուսանուններին:

Բառարանագիտության պատմության մի դրվագ ներկայացրեց բառարանագրության բաժնի կըրտսեր գիտաշխատող Վ. Բաղրամյանը՝ «Մ. Սիմեոնյանի անգլերեն-հայերեն բառարանի բառարանագրական արժեքը» զեկուցումով փաստեր ներկայացրեց նշյալ բառարանի մասին:

Գ. Գրիգորյանի «Դիմակի ազդեցությունը խոսքի ընկալման վրա» զեկուցումը ներկայացնում էր հայերեն հնչյունաբանության գիտափորձերով հաստատված տվյալները՝ դրանք համադրելով այլ լեզուների նյութերի ընձեռած արդյունքներին:

Ա.Գալստյանը և Լ. Թելյանը «*Անել* բայի իմաստագործառական քննություն» համատեղ զեկուցման մեջ անդրադարձել են նշված բայի իմաստաբանական նկարագրին, դարձվածակազմական տարողունակությանը, իմաստային այլևայլ կիրառություններին հայերեն խոսքի տարբեր շերտերում՝ ժողովրդախոսակցական հայերեն, բարբառներ, մեղմասություններ, ժարգոնային արտահայտություններ, մանկական խոսք: Սույն զեկուցումը անկանոն բայերի իմաստագործառական քննությանը նվիրված շարքի առաջին մասն է:

«Վանկային և խառը հապավումները արդի հայերենում» զեկուցման մեջ Վ. Խաչատրյանը քննում է հայերենի բառակազմական ուրույն եղանակի՝ հապավման առանձնահատկությունները: Օ. Խաչատրյանը և Ս. Տիոյանը «Կիրառական արվեստի մի քանի տերմինների մասին» զեկուցման մեջ անդրադառնում են լեզվի ինստիտուտի նախկին աշխատակից Մ. Գյուլնազարյանի՝ կիրառական արվեստի տերմիններին նվիրված աշխատությանը, որի հրատարակության պատրաստման գործ են ձեռնարկել սույն զեկուցման հեղինակները:

Ն. Սարգսյանի և Ա. Մկրտումյանի համատեղ զեկուցումը հայերենում *բիո-* և *կենսա-* բաղադրիչներով կազմությունների գործառույթին էր վերաբերում. հարցը դիտարկվում էր փոխառություն-կիսապատճենում հայերեն տարբերակ կտրվածքով:

Գ. Հովսեփյանը անդրադարձել է «Նոր բառեր» բառարանաշարքում գրանցված նորակազմությունների

առավել գործուն կաղապարներին, Ի. Մարգարյանը՝ հեռուատատեսության խոսքից դուրս գրած նորակազմություններին:

Ն.Սիմոնյանի «Հայ-գերմանական բառային զուգաբանություններ» զեկուցումը, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ, հագեցած էր բազմաթիվ բացատրական և ստուգաբանական բառարանների համադրումից և վերլուծությունից բխող ուշագրավ եզրահանգումներով:

Ա.Վարդանյանը «Հարանունների դասակարգման շուրջ» զեկուցման մեջ ներկայացրեց դասավանդման ընթացքում հարանունների դասակարգման մի քանի խնդիրներ:

Ռ. Մարգարյանը կարդաց «Հագուստ անվանող բառերը դարձվածքներում» զեկուցումը: Վերջում զեկուցողը նշեց նաև, որ իր թեկնածուական ատենախոսության ընդդիմախոս եղել է Հ. Ամալյանը, որին միշտ հիշում է երախտագիտությամբ և խորին ակնածանքով:

Բառագիտության արդի խնդիրներին նվիրված գիտաժողովը աչքի ընկավ թեմաների բազմազանությամբ, հարցադրումների լայն շրջանակով, առաջարկվող դասակարգումների, մոտեցումների թարմությամբ և յուրահատկությամբ:

22/10/2024

Ս. թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում տեղի ունեցավ հերթական կլոր սեղան-քննարկումը: Այն ընթանում էր լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության և հայոց լեզվի պատմության և բաժինների միջև:

Քննարկվեցին միջազգային բարձր վարկանիշային գիտական պարբերականներում (SCOPUS, Web of SCIENCE) գիտական աշխատանքներ հրապարակելու խնդիրները: Կլոր սեղան-քննարկման մասնակիցներն անդրադարձան նաև հետազոտողի տվյալների բաց նույնականացման (ORCID) յուրահատկություններին: Քննարկվեց նաև հրապարակման ենթակա ուսումնասիրության շրջանակներում գիտական աշխատանքի բաշխվածության հարցը մասնակիցների միջև:

Ս. թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում տեղի ունեցավ հերթական կլոր սեղան-քննարկումը: Այն ընթանում էր լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության և կիրառական լեզվա-

բանության բաժինների միջև:

Քննարկվեցին երկու մասնագիտական ուղղությունների համար ընդհանուր խնդիրները: Ուշադրության կենտրոնում լեզվաբանության դասական և նորագույն ուղղությունները զարգացնելու հեռանկարներն էին, դիտարկվեցին վերոնշյալ մասնագիտացումներով նոր ուժեր ընդգրկելու խնդիրները, օտար լեզուների իմացության մակարդակի, մասնագիտական նորագույն գրականության յուրացման, ինչպես նաև միջազգային բարձր վարկանիշային գիտական պարբերականներում հրատարակումների նրբությունները: Կլոր սեղանի մասնակիցները անդրադարձան նաև օտարաբանությունների խնդրին, մասնագիտական տերմինների թարգմանելիության հարցերին: